ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

««168 ԺԱՄ» ՍՊԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 327-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, 328-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 337-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 1087.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 13-ՐԴ ՄԱՍԻ, «ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 31-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով ««168 ԺԱՄ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի, 328-րդ հոդվածի 3-րդ մասի, 337-րդ հոդվածի 1-ին մասի, 1087.1-ին հոդվածի 13-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 2023 թվականի մայիսի 17-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «168 ԺԱՄ» ՍՊԸ (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 328-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 75-րդ և 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/21745/02/21 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ օրենսդրական խնդիրն այն է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածը, 328-րդ հոդվածի 3-րդ մասը, 337-րդ հոդվածի 1-ին մասը, 1087.1-ին հոդվածի 13-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը որոշակի չեն, որի հետևանքով իրավունքի սուբյեկտի և իրավակիրառողի համար պարզ չէ, թե պատվի և արժանապատվության

պաշտպանության հայցերով անձը ո՞ր պահից սկսած կարող է դիմել դատական պաշտպանության, ինչպե՞ս պետք է որոշել մեկամսյա ժամկետի հաշվարկման սկիզբը, ընթացքը, և ո՞ր պահին է ավարտվում մեկամսյա ժամկետը՝ «ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին» կանոնում պարունակվող «համապատասխան» բառը վերաբերում է ժամկետի սկիզբը որոշող օրվա ամսաթվին, թե՞ դրա հաջորդ օրվա ամսաթվին, երբ մեկնարկում է ժամկետի ընթացքը:

Ըստ Դիմողի՝ «(...) վիճարկվող դրույթները ոչ միայն տարընկալում են առաջացրել թիվ ԵԴ/21745/02/21 քաղաքացիական գործով, այլ ուսումնասիրելով դատական պրակտիկան, տեսնում ենք, որ նույն փաստական հանգամանքներ ունեցող գործերով, տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տվել, ինչպիսի պայմաններում առավել քան ակնհայտ է, որ առկա է իրավական անորոշություն»:

Դիմողը փաստում է, որ մի դեպքում մեկամսյա ժամկետը հաշվարկվում է իրադարձությանը հաջորդող օրվանից, և տվյալ օրով է պայմանավորվում ժամկետի վերջին օրը, իսկ մյուս դեպքում՝ մեկամսյա ժամկետը հաշվարկվում է իրադարձության օրվանից, և տվյալ օրով է պայմանավորվում ժամկետի ավարտը:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 328-րդ հոդվածի 3-ին մասին՝ Դիմողը նշում է, որ օրենսդիրը չի մանրամասնել «համապատասխան ամսաթիվ» եզրույթի բովանդակությունը, որպիսի պայմաններում տվյալ նորմը չի ապահովում իրավունքի սուբյեկտի և իրավակիրառողի միատեսակ ընկալումը:

Ամփոփելով՝ Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածը, 337-րդ հոդվածի 1-ին մասը, 328-րդ հոդվածի 3-րդ մասը, 1087.1-ին հոդվածի 13-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում են Սահմանադրության 79-րդ հոդվածին, ինչի հետևանքով խախտվել են իր՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմնական իրավունքները:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (ստորև՝ Օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական

դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

3.1. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում Օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:* Օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը****:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պայմաններում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը****:*

Օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և* ***հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական***

ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. *«(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ,* ***դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:***

Սահմանադրական դատարանը վերոնշյալ աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է. *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե* ***իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:***

Նույն աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև փաստել է, որ *«(…) անհատական դիմումների ընդունելիության վավերապայմանների սահմանումն ինքնանպատակ չէ:* ***Այդ վավերապայմանների նպատակն է ապահովել սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացումը՝*** *դատարանին ձերբազատելով ինչպես անհիմն դիմումներից և դրանց հետևանքով սահմանադրական դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին, այն է՝ ընդհանուր արդարադատության իրականացումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա ապահովելուն»:*

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն* ***ակնհայտ անհիմն է:***

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու բավարար հիմնավորումներ վիճարկվող օրինադրույթի և հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:**

Սույն դիմումով Դիմողը խնդրել է որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի, 337-րդ հոդվածի 1-ին մասի, 328-րդ հոդվածի 3-րդ մասի, 1087.1-ին հոդվածի 13-րդ մասի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 75 և 79-րդ հոդվածներին, սակայն **չի ներկայացրել բավարար հիմնավորումներ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ:**

Մասնավորապես՝ Դիմողը բարձրացրել է Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված՝ հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի, ինչպես նաև Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված՝ որոշակիության սկզբունքի խախտման վերաբերյալ հարց, սակայն **բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման փաստը, հետևաբար և՝ տվյալ փաստի և վիճարկվող հոդվածների միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 75-րդ և 79-րդ հոդվածների բովանդակությունից բխում է, որ **կոնկրետ վերահսկողության պարագայում դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո, ինչը սույն պարագայում տեղի չի ունեցել: Ուստի՝ Դիմողը չի հիմնավորել նաև իր կողմից**

վիճարկվող դրույթների հակասությունը Սահմանադրության 75-րդ և 79-րդ հոդվածներին:

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. *«(...) անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության անմիջական պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝* ***վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/ սահմանափակման:*** *Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ* ***Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրահիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»:***

Հատկանշական է նաև, որ Դիմողը ներկայացրել է պնդում առ այն, որ վիճարկվող դրույթները հակասում են Սահմանադրության 79-րդ հոդվածին, որի հետևանքով խախտվել են իր՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմնական իրավունքները, սակայն **այդ առնչությամբ չի ներկայացրել որևէ հիմնավորում՝ սահմանափակվելով սոսկ այդ պնդման վկայակոչմամբ:** Ավելին, անհատական դիմումի խնդրամասում Դիմողը ներկայացրել է վիճարկվող օրինադրույթները՝ Սահմանադրության միայն 75-րդ և 79-րդ հոդվածներին հակասող ճանաչելու վերաբերյալ խնդրանք:

Վերոնշյալի հաշվառմամբ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն **դիմումով չի հիմնավորվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի, 337-րդ հոդվածի 1-ին մասի, 328-րդ հոդվածի 3-րդ մասի, 1087.1-ին հոդվածի 13-րդ մասի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի անհամապատասխանությունը Սահմանադրության 2-րդ գլխով**

երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության, հետևաբար և՝ Սահմանադրության 75-րդ և 79-րդ հոդվածներին:

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ **դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

3.2. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Սահմանադրական դատարանը փաստում է, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ **վիճարկվող նորմատիվ իրավական ակտի/վերջինիս դրույթ(ներ)ի սահմանադրականության գնահատման հարցեր**:

Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի/վերջինիս դրույթ(ներ)ի, ինչպես նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատումը:

Սույն անհատական դիմումով Դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի, 337-րդ հոդվածի 1-ին մասի, 328-րդ հոդվածի 3-րդ մասի, 1087.1-ին հոդվածի 13-րդ մասի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է համապատասխան օրինադրույթների կիրառման իրավաչափության հարց**:

Դիմողը ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«(...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 328-րդ հոդվածի 3-րդ մասը չեն համապատասխանում որոշակիության սկզբունքին, որի հետևանքով, առաջացել են տարատեսակ մեկնաբանություններ նաև թիվ ԵԴ/21745/02/21 քաղաքացիական գործով, որտեղ Դիմողը հանդես է գալիս որպես պատասխանող»:*

Հավելելով՝ Դիմողը նաև նշել է. *«Այսինքն, եթե վիճարկվող դրույթները լինեին բավարար չափով որոշակի, Վերաքննիչ դատարանի կողմից նման մեկնաբանությամբ չէր կիրառվի, հետևաբար դատական ակտը չէր բեկանվի և չէր խախտվի Դիմողի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները»:*

Վերոշարադրյալի հաշվառմամբ, նկատի առնելով նաև սույն դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **Դիմողը վիճարկվող դրույթների հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են թիվ ԵԴ/21745/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում **դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականության գնահատում, այլ ՀՀ դատարանների գործողությունների իրավաչափության ստուգում, որը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասությունից:

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման նաև դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերի,

ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

««168 ԺԱՄ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի, 328-րդ հոդվածի 3-րդ մասի, 337-րդ հոդվածի 1-ին մասի, 1087.1-ին հոդվածի 13-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

13 հունիսի 2023 թվականի
ՍԴԱՈ-62